ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

_____N _____
Ձեր N _____

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

2023 թվականի հուլիսի 12-ի Ձեր առցանց հարցման կապակցությամբ հայտնում եմ.

1. 2022 թվականի ընթացքում տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման նպատակով (հեռուստատեսային ծառայություններ, սոցիալական հոլովակների և տեսանյութերի պատրաստում և ցուցադրություն, առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումներ և տպագրություն) Առողջապահության նախարարության կողմից ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Առողջ ապրելակերպի խթանման և ծխելու դեմ պայքարի միջոցառումներ»-ի շրջանակում՝ ծախսվել է 30,871,200 (երեսուն միլիոն ութ հարյուր յոթանասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Միաժամանակ, գործընկերներ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և ֆինանսավորմամբ (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Հայաստանի ամերիկյան համալսարան, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Միջազգային հանրապետական ինստիտուտ և այլն) իրականացվել են տարբեր տեղեկատվական արշավներ.

2. 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով «Առողջապահություն» բաժնի «Առողջ ապրելակերպի խթանման և ծխելու դեմ պայքարի միջոցառումներ»-ի շրջանակում տեղեկատվական արշավների կազմակերպման և իրականացման համար (հեռուստատեսային ծառայություններ, սոցիալական հոլովակների և տեսանյութերի պատրաստում և ցուցադրություն, առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված

միջոցառումներ նախատեսված դպրոցահասակ երեխաների և տարեցների համար և տպագրություն) նախատեսված է 87,175,000 (ութսունյոթ միլիոն մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, որից՝ հուլիսի 17-ի դրությամբ, կնքվել են 48,572,580 (քառասունութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարի պայմանագրեր: Միաժամանակ, գործընկերներ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և ֆինանսավորմամբ (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Հայաստանի ամերիկյան համալսարան, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Միջազգային հանրապետական ինստիտուտ և այլն) իրականացվել են տարբեր տեղեկատվական արշավներ.

3,4 2022 և 2023 թվականներին ՀՀ պետական բյուջեով գերատեսչության պաշտոնական կայքի պատրաստման կամ բարեփոխման համար միջոցներ նախատեսված չեն: Առողջապահության նախարարությունը դեռևս կիրառում է 2014 թվականին գործարկված պաշտոնական կայքը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

18.07.2023

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

Կատարող՝ Հասմիկ Սարգսյան,
Ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. 060 80 80 03 (1804)